«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ **Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը ռուսաց լեզու առարկայի դասավանդման ընթացքում**

ԱՌԱՐԿԱ **Ռուսաց լեզու**

ՀԵՂԻՆԱԿ **Արմենուհի Հարությունյան**

ՄԱՐԶ **ք.** Երևան Մալաթիա-Սեբաստիա

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ **Նորիկ Խաչատրյանի անվան հ. 113** միջնակարգ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1

ՈՒՍՈՒՑՉԻ ԴԵՐՆ ՈՒ ԿԵՐՊԱՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀԸ

1.1. ՈՒՍՈՒՑԻՉԸ՝ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ԿՐՈՂ.....5

1.2 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԵՐԹԱՐԿՎՈՂ ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀԸ.....7

ԳԼՈՒԽ 2

ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ–ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՈՐՊԵՍ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔ.....9

ԳԼՈՒԽ 3

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՍ

ԴԱՍԻ ՊԼԱՆ.....14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....16

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այն, ինչ մենք գիտենք, սահմանափակ է, այն, ինչ մենք չգիտենք, անվերջանալի է:

Պ. Լապլաս

Աշխարհը փոխվում է շատ արագ, իսկ ժամանակակից հասարակության առջև դրված խնդիրներն ու մարտահրավերները ստիպում են վերանայել կրթության մատուցման եղանակներն ու մոտեցումները: Այսօր աշակերտների առջև նոր պահանջներ են դրված. հիմնական կարողություններից բացի՝ նրանք պետք է ունենան 21–րդ դարում պահանջվող բոլոր հմտությունները՝ համագործակցության, հաղորդակցման, խնդիրների համալիր լուծման, նախաձեռնողականության, ինքնուրույնության, որոշումների կայացման և այլն: Այս ամենից զատ անհրաժեշտ է սովորողների մեջ ձևավորել արժեհամակարգ: Արդի փոթորկուն դարաշրջանը յուրաքանչյուրիս ընդհանուր տան՝ Երկիր մոլորակի քաղաքական, սոցիալ–տնտեսական, բնապահպանական ու նաև կրթական ոլորտների արժեհամակարգերի փոփոխությունների դարաշրջան է:

Կրթությունն առաջադիմության, մշակույթի պահպանման, զարգացման անհրաժեշտ պայմանն է, իսկ կրթվելն անհատի զարգացման գործընթացն է՝ միտված գիտելիքների, հմտությունների տիրապետմանը, արժեքային վերաբերմունքի ձևավորմանը: Այն սոցիալական նշանակություն ունեցող փորձը նախորդ սերունդներից հաջորդին փոխանցելու՝ հանրորեն կազմակերպվող ու կարգավորվող, ինչպես նաև անհատի կայացման կենսաբանասոցիալական մշտական գործընթաց է, որի արդյունքն անհատի ձևավորումն է[1]: Այն անձի ձևավորման ու զարգացման, իմացական գործունեության եղանակների տիրապետման, գիտելիքների հաղորդման, կարողությունների ու հմտությունների մշակման, անցյալի փորձի յուրացման գործընթաց է:

Կրթությունը որոնում է սոցիալական խթանման, առաջնորդության և վերահսկողության միջոցով երեխային զարգացնելու բնական հնարները, որպեսզի

1. Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ՝ ժողովրդավարական մշակույթի համար (Բնօրինակի անվանումը՝ Reference Framework of Competences for Democratic Culture – Volume 3 (ISBN 978–92–871–8575–4) (Եռահատոր շարք)՝ Եվրոպայի խորհրդի հրատարակչություն, էջ 6–7):

նրանք կարողանան և տրամադրվեն առողջ, երջանիկ և բարոյական արժանի կյանք վարելու [2]: Այս առումով ՀՀ կրթական համակարգն ու ուսումնական հաստատությունները պետք է աշակերտներին պատրաստեն որպես ակտիվ, հաղորդակից և պատասխանատու անհատներ, որպեսզի մեր երեխաները զինվեն այնպիսի արժեքներով, վերաբերմունքով, հմտություններով, գիտելիքով ու քննադատական մտածողությամբ, որոնք կնպաստեն ապագայում պատասխանատու որոշումներ կայացնելուն: Սա նշանակում է, որ սովորողները պետք է իմանան և հասկանան իրենց առջև ծառացած մարտահրավերները և իրենց որոշումների հետևանքները: Այս ամենի համար նրանց անհրաժեշտ է ոչ միայն գիտելիք, այլ նաև համապատասխան կարողունակություններ (կոմպետենցիաներ), արժեքներ, վերաբերմունք, հմտություններ, գիտելիք ու քննադատական ընկալում, որոնք անհատին անհրաժեշտ են հասարակական կյանքին ակտիվ մասնակցության համար:

Այս հետազոտականի շրջանակներում կանդրադառնանք ուսուցչի կերպարին՝ որպես արժեհամակարգի կրող և այդ արժեհամակարգի ձևավորող, ինչպես նաև սովորողների մեջ արժեհամակարգի ձևավորմանը ռուսաց լեզվի դասավանդման ընթացքում: Սահմանենք հետազոտական աշխատանքի նպատակը:

Հետազոտության նպատակն է՝
բացահայտել սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման էությունը, միջոցները, մեթոդներն ու ուղիները:
Հետազոտության խնդիրներն են՝
1. ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը, 2.կիրառել մեթոդներ և միջոցներ վերը նշված նպատակին հասնելու համար, 3. սահմանել սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորմանը նպաստող մեթոդներն ու միջոցները, 4. գրանցել արդյունքները:

ԳԼՈՒԽ 1

ՈՒՍՈՒՑՉԻ ԴԵՐՆ ՈՒ ԿԵՐՊԱՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀԸ

1.1. ՈՒՍՈՒՑԻՉԸ՝ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ԿՐՈՂ

Ուսուցչի գործունեությունը բարդ է և աշխատատար: Ուսուցչի մասին խոսելիս սովորաբար կարևորվում է նրա դերը հասարակության մեջ բարեփոխումներ իրականացնելու, մարդասիրական արժեքներ կրելու և դրանք սովորողներին փոխանցելու տեսանկյունից:

Մասնագիտական գրականության մեջ հաճախ է նշվում ուսուցչի անձնային, մասնագիտական որակների կարևորությունը: Հատկապես ընդգծվում են դասավանդվող առարկայի և երեխաների հոգեբանական առանձնահատկությունների իմացությունը, դասավանդման արվեստը և մանկավարժական տակտը, ուսուցչի անձնային բարոյական, կամային որակները, ինչպիսիք են զուսպ, ազնիվ, ուշադիր լինելը, բարեխղճությունը, նրբանկատությունը, երեխաների նկատմամբ ունեցած սերը ՝ մի խոսքով ասցված՝ այն արժեհամակարգը , որն ուսուցիչը կրում է իր մեջ:

Ըստ ժամանակակից մանկավարժական մոտեցումների՝ ուսուցչին ներկայացվող պահանջների մեջ կարող է հանդիպել այսպիսի բնորոշումների.

● որոշում կայացնող,

● ուսուցմանն աջակցող (ֆասիլիտատոր)

● ուսուցման գործընթացին հետևող,

● ուսուցման ընթացքը գնահատող,

● անձնական օրինակ ծառայող:

Ուսուցչի մասնագիտական որակները բնորոշվում են նաև այլ տեսանկյունից՝

● Արդարացի և անաչառ լինելը: Իր գործունեության ընթացքում ուսուցիչը պարբերաբար գնահատում է աշակերտներին և գնահատելիս ուսուցչի արդարացի լինելը ունի նաև դաստիարակչական նշանակություն:

● Պահանջկոտությունը, որը դրսևորվում է և՛ իր, և՛ իր աշակերտների նկատմամբ:

● Հումորի զգացումը: Իզուր չի ասվում, որ ուրախ և աշխույժ ուսուցիչն ավելի լավ է ուսուցանում, քան մռայլ ուսուցիչը: Հումորի զգացում ունեցող ուսուցիչը դասարանում ստեղծում է անմիջական, անկաշկանդ և բարյացակամ մթնոլորտ:

● Մանկավարժական տակտը: Այն աշակերտների նկատմամբ բարեկիրթ, չափավոր վերաբերմունքի դրսևորումն է, որի հիմնաքարը աշակերտի անձի նկատմամբ ունեցած հարգանքն է:

Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ նշվում է նաև ուսուցչին ներկայացվող մի շարք պահանջներ, ըստ որի ուսուցիչը պետք է՝

● ունենա աշխարհայացքային կողմնորոշում և հոգևոր բարձր արժեքներ.

- աշակերտի մեջ ձևավորի ամբողջ կյանքի ընթացքում սովորելու անհրաժեշտության

գիտակցումը.

● գիտակցի, որ ինքը դպրոցի անբաժան մասն է.

● ունենա անձնական պատասխանատվության զգացում.

● ունակ լինի մարդկանց մեջ տեսնելու անհատին.

● ունենա հաղորդակցման հմտություն.

● ցուցաբերի համագործակցային մոտեցում.

● ունենա ղեկավարման հմտություններ.

● տիրապետի տեղեկատվական տեխնոլոգիաներին և դրանք օգտագործի դասապրոցեսի արդյունավետության բարձրացման նպատակով:

2. Հանրակրթության պետական չափորոշիչ–Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ https://www.arlis.am/images/ARLIS/

1.2 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԵՐԹԱՐԿՎՈՂ ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀԸ

Ամեն դարաշրջան իր խնդիրներն ու պահանջներն է թելադրում դպրոցին: Կրթական նոր քաղաքականությամբ կարևորվում է ուսուցչի դերը՝ որպես բովանդակության մշակողի, որպես նորարարի: Կրթակարգը ուսուցչի գործունեության ուղեկիցն է լինելու: Մեծանում է ուսուցչի պատասխանատվությունը: Նա իր մեթոդական պատրաստականությունն ու գիտելիքները հարստացնելու խնդիր ունի: Նա պետք է ապահովի պետության պետության ակնկալիքները հանրակրթությունից:

Աշխարհը, անվերջ փոփոխությունների ենթարկվելով, իր պահանջներն է առաջադրում հասարակական կյանքի բոլոր ոլորտներին, ինչպես նաև կրթական համակարգերին: Արդի ժամանակաշրջանը տեղեկատվության և գիտելիքների գերակայության դարաշրջան է, որն էլ պահանջում է դինամիկ փոփոխություններ ամենուր՝ գիտության մեջ, առտնին կենցաղում, առհասարակ, մտածողության մեջ: Կրթության ոլորտում բարեփոխումների ընդհանուր ուղղվածությունը պայմանավորում է ուսուցման կազմակերպման նոր համակարգերի ու մոտեցումների ներդրման անհրաժեշտություն թե՛ միջնակարգ հանրակրթական, թե՛ բարձրագույն ուսումնական համակարգերում: Ուսուցման ավանդական ձևերի կողքին կազմակերպվում են նորերը՝ արդիականները, որոնք առաջադրում են ուսուցման ժամանակակից ձևեր ու մեթոդներ: Ուսուցման գործընթացը երկկողմանի է, ուստի խիստ անհրաժեշտ է ապահովել սովորեցնողի (ուսուցչի) և սովորողի (աշակերտի) փոխկապակցված աշխատանքը: Ուսուցման մեթոդներն ընտրելիս պետք է հաշվի առնել սովորողների գիտելիքների մակարդակը, տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները: Սովորողը պետք է հստակ իմանա՝ ինչ է անում և ինչու, պետք է մշտապես տեղյակ լինի՝ ինչ է իրենից ակնկալվում, պետք է վստահ լինի, որ ուսուցիչը աջակցելու է, օգնելու է իրեն[3] :

Սոցիալ–մշակութային միջավայրով է պայմանավորված հասարակության մեջ ապրող մարդու վարքագծի օրենքներն ու չափանիշերը, արժեքային կողմնորոշումներն ու դրույթները: Միջավայրի կառուցվածքն ընդգրկում է անձի կապերն ու հարաբերությունները, գործունեության տեսակներն ու շփման ձևեր, այդ պատճառով էլ սոցիալ–մշակութային միջավայրը կարող է ներկայացվել մի

[3] Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Կրթության ազգային ինստիտուտ, Լոռու մասնաճյուղ, ք. Վանաձոր, 2008, էջ 6:

կողմից՝ մարդու գործունեության տեսակների համակարգի միջոցով, իսկ մյուս կողմից՝ փոքր սոցիալական խմբի, որպես ամբողջական շարք, որի շրջանակում մարդիկ միավորված են ընդհանուր նպատակներով, հետաքրքրություններով, ճանաչում են մեկը մյուսին և միշտ շփվում են միմյանց հետ: Սոցիալ–մշակութային միջավայրի այդպիսի կառուցվածքային վերլուծության կարևորությունը պայմանավորված է նրանով, որ այն հնարավորություն է տալիս առավել լիարժեք բացատրել անհատի զարգացման մեջ այդ բաղադրիչների դերը:

ԳԼՈՒԽ 2

ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ–ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՈՐՊԵՍ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔ

Երեխայի սոցիալական և սոցիալ–մշակութային միջավայրը փոխկապակցված են, որոնք կարող են ներկայացվել որպես երկու՝ նյութական և հոգևոր բաղադրիչներ: «Յուրաքանչյուր սերունդ տարբերվում է ոչ միայն անցյալի նկատմամբ ունեցած իր վերաբերմունքով, այլև պատմականորեն առաջադրված խնդիրներով և լուծումների արդյունավետությամբ: Անձի կայացմանը, լիարժեքությանը նպաստում է ազգային մշակութային ժառանգությունը, որտեղ նյութական, հոգևոր, բարոյական արժեքները գտնվում են որոշակի հարաբերակցության մեջ»[4]: Երեխան գտնվում է սոցիալ–մշակութային միջավայրի կենտրոնում, եթե շրջագծից շարժվենք կենտրոն, այսինքն՝ արտաքին ցուցանիշներից դեպի ներքին բովանդակություն, ապա վերլուծության համար նյութական բաղադրիչը կարելի է բաժանել մի շարք ցուցիչների.

• նյութական արժեքներ – աշխատանքային գործիքներ և միջոցներ, աշխատանքի արդյունքներ, արտադրողական տեխնոլոգիաներ և այլն,

• աշխատանքային կոլեկտիվներ – համատեղ աշխատանքային գործունեությամբ զբաղվող մարդկանց արտադրողական միավորումներ,

• արտադրողական հարաբերություններ – որոնցում ընդգրկված են մարդիկ համատեղ գործունեության ընթացքում և աշխատանքի արդյունքների բաշխման ժամանակ,

• հասարակական հարաբերություններ – որոնք ձևավորվել են մարդկության կողմից համատեղ կենսագործունեության ընթացքում և ստուգում են անցել պատմական շարունակական ժամանակահատվածում,

• գործունեություն – անձի կողմից կանխատեսված–նախընտրած ակտիվություն:

Հոգևոր բաղադրիչներն էլ վերլուծության համար ունեն իրենց յուրահատուկ ցուցիչները՝

---

[4] Հովակիմյան Գ. Պ., Ժառանգորդումը մշակույթում, «Մանկավարժական միտք» N 1–2, «Զանգակ» հրատ., Եր., 2012, էջ 40–49:

• հոգևոր արժեքներ – գաղափարներ, սկզբունքներ, օրենքներ նաև մշակույթի ստեղծագործություններ, որոնք կարևոր են մարդու կենսագործունեության և այլ մարդկանց հետ համատեղ կյանքի համար,

• փոքր սոցիալական խմբեր – անձի վերաբերմունքը բարձրագույն արժեքների հանդեպ, որոնք ստեղծվել են պատմական զարգացման ընթացքում՝ մարդկային կյանքը, բնությունը, ազատությունը, երջանկությունը և այլն,

• հասարակական հարաբերություններ – մարդկությունը ձևավորվել է համատեղ կենսագործունեության ընթացքում, ինչը ստուգում է անցել պատմական շարունակական ժամանակահատվածում,

• շփում – մարդուն բնության կողմից տրված գործառույթ, որը միաժամանակ իրագործվում և ապահովում է նրա փոխազդեցությունն այլ մարդկանց հետ:

Միջավայրը, որը շրջապատում է երեխային, ընկալվում և ընդունվում է ընտրողականությամբ: Միջավայրի ազդեցության ընկալումը, շարժառիթների և պատճառների ընտրողական բնույթի ըմբռնումը կարևոր նշանակություն ունի մանկավարժական փորձում: Կ. Ն. Վենցելը ընտրողականությունն ու փոխազդեցության հնարավոր բնույթի մակարդակը բացատրում է փոխազդող մարդկանց էներգիայով և բարյացակամությամբ[5]: Այս երևույթն ամենից առաջ բացատրվում է որոշակի առանձնահատկությամբ՝ զգացմունքների, մտքերի, կրքի և սեփական որոշումների ընդունման անհատական աշխարհով: Ս. Վ. Կովալևը այն պայմանավորում է դպրոցականի հոգեբանության յուրահատկություններով[6], Ի. Ս. Կոնը՝ ինքնուրույնության մակարդակով և սոցիալական պատասխանատվությամբ[7], Վ. Ֆրանկլը՝ խղճի և ինտուիցիայի զարգացման մակարդակով՝ կյանքի ցանկացած պայմաններում, հատկապես՝ կոնֆլիկտային իրավիճակում[8]: Չնայած սոցիալ–մշակութային գործոնների բազմազանությանը, որոնք ազդում են երեխայի վրա և առաջացնում են զգացմունքային դրական ապրումներ, անձի կայացման գործում գերակայող դերը պատկանում է դպրոցին՝ որպես հատուկ կառուցվածքային

5 Вентцель К. Н., Среда как фактор нравственного воспитания, М., 1984.

6 Ковалев С. В., Подготовка старшеклассников к семейной жизни, М., «Просвещение», 1991.

7 Кон И., Социализация детей в изменяющемся мире, М., 1990.

8 Франкл В., Человек в поисках смысла, М., 1990.

ինստիտուտ: Դպրոցը, սոցիալական միկրոմիջավայրերի՝ այլ համայնքների և խմբերի համեմատությամբ ունի օբյեկտիվորեն առավել մեծ քանակությամբ գործոններ, որպեսզի դառնա սոցիալ–մշակութային փոխազդեցության կազմակերպիչ: Փոխազդող սուբյեկտների համակարգային դիտարկման ժամանակ (դպրոցական և միկրոմիջավայր, դպրոց և այլ միկրոմիջավայր) կարևոր նշանակություն են ձեռք բերում ոչ միայն բաղադրիչների խումբը, այլ նաև նրանց կառուցվածքը, միջհամակարգային կապերը, փոխազդեցության մեխանիզմներն ու բնութագրերը: Մենք անհրաժեշտ ենք համարում մանկավարժական գործընթացում փոխազդեցության շարքում առանձնացնել Վ. Դ. Սեմյոնովի կողմից առաջադրված դրույթները[9].

• Կողմերի փոխազդեցությունը (մանկավարժ և աշակերտ) հանդես է գալիս որպես զարգացող, աշակերտի անհատականությունը զարգացնող և դաստիարակի անհատականությունը կատարելագործող գործընթաց՝ մանկավարժի ղեկավարող դերի ներքո,

• կողմերը փոխազդում են մանկավարժների և աշակերտների համատեղ, բազմաբնույթ գործունեության՝ ճանաչման, ուսուցման, խաղային, շփման ընթացքում,

• կողմերի փոխազդեցությունը փոխհամաձայնեցված է, այն իրականանում է բարոյական և հոգևոր արժեքների պահանջմունքների մոտիվացիոն ոլորտի համոզմունքների մակարդակում,

• մանկավարժի և աշակերտի փոխազդեցության ընթացքում է վերջինիս մոտ գործընթացի հանդեպ ցանկություն և պատրաստակամություն առաջանում,

• մանկավարժական փոխազդեցություն՝ առավել բարդ գործընթաց, որը կազմված է բազմաթիվ բաղադրիչներից, որոնցից ամենաածավալունն են դաստիարակչականը, դիդակտիկը և սոցիալ–մանկավարժականը:

Մեր համոզմամբ, դպրոցի և աշակերտի կենսագործունեությունը, այլ սոցիալական միկրոմիջավայրերի հետ փոխազդեցությունը պետք է իրականացվեն որպես զարգացող, աշակերտի անհատականությունը զարգացնող և հասուն սուբյեկտների անհատականությունը կատարելագործող նպատակաուղղված և

[9] Семенов В. Д., Взаимоотношение школы и социальной среды, М., «Педагогика», 1986.

մանկավարժորեն ղեկավարվող գործընթաց: Այսպիսի բազմագործուն փոխազդեցության ընթացքում տեղի կունենա տարբեր սուբյեկտների ձևափոխված առանձին մասերի և գործառույթների միավորում՝ մի նոր ամբողջականության մեջ, տարրերի և կապերի վերադասավորում, փոխազդող սոցիումների համակարգերի փոփոխություն: Այլ կերպ ասած, տեղի կունենա բոլոր սուբյեկտների դաստիարակչական փոխազդեցության ինտեգրում: Միաժամանակ կազմակերպված փոխազդեցության ինտեգրման արդյունքները համազոր չեն յուրաքանչյուր առանձին վերցրած փոխազդեցության քանակի արդյունքներին, քանի որ դրանք նոր որակի են բերում փոխազդող համակարգերին: Ծայրահեղ դեպքում, կարելի է առանձնացնել սոցիալ–մշակութային միջավայրի կազմակերպման երեք տարբեր միջոցներ՝ կախված համակարգերի, հարաբերությունների և կապերի տեսակներից՝

1. միջավայր, որը ստեղծվել է միօրինակության սկզբունքով: Այստեղ գերիշխում են ադմինիստրատիվ–նպատակային կապերն ու հարաբերությունները, որոնք, որպես կանոն, որոշվում են մի սուբյեկտով՝ իշխանությամբ, որտեղ համակարգայնացվածության ցուցիչը ձգտում է առավելագույնի:

2. Միջավայր, որը ստեղծվել է բազմազանության սկզբունքով: Այստեղ կապերն ու հարաբերություններն ունեն մրցակցային բնույթ: Սկսվում է սոցիալ–մշակութային համակարգի տրոհում, փլուզվում է սոցիալ– մշակութային միասնական տարածությունը: Համակարգայնվածության ցուցիչը հասնում է նվազագույնի:

3. Միջավայր, որը ստեղծվել է փոփոխականության սկզբունքով (որպես բազմազանության միասնություն): Այստեղ կապերն ու հարաբերություններն ունեն նմանակող բնույթ: Սոցիալ–մշակութային ծրագրերի շրջանակում տեղի է ունենում տարբեր ռեսուրսների միավորում, որն ապահովում է տարբեր սուբյեկտների՝ առանձին մարդկանց, համայնքների, սոցիալ–մշակութային համակարգերի զարգացման մեջ, համակարգվածության ցուցիչը ձգտում է օպտիմալի: Սոցիալ–մշակութային միջավայրի կազմակերպման թվարկված միջոցներից միայն երրորդն ամնիջական կապ ունի դպրոցի գործունեության հետ, քանի որ փոփոխականության սկզբունքն այսօր իշխող է դառնում՝ երեխաների դաստիարակման և կրթական հարցերի տեսանկյունից: Միաժամանակ, դպրոցական ծրագրերի փոփոխությունը կոչված է օգնելու յուրաքանչյուր երեխայի:

Ներկայացնենք ևս մի փաստ փոփոխականության մոտեցման օգտին: Դաստիարակության հիմնական խնդիրներից է երեխայի զարգացումը, որը որպես

կենսագործունեության սուբյեկտ ենթադրում է երեխաների հետ փոխազդեցության վերակառուցում, որպեսզի նրանց անընդհատ կանգնեցնեն վարքագծի, կյանքի պայմանների, անձնական դիրքորոշումների և այլ ընտրությունների առջև: Իհարկե, պետք է նշել, որ երեխայի կողմից կատարված ընտրությունը ոչ միշտ կարող է ճիշտ լինել, քանի որ սոցիալական շրջապատը նրան ընձեռում է մեծ քանակությամբ ասոցիալ օրինակներ:

ԳԼՈՒԽ 3

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՍ

ԴԱՍԻ ՊԼԱՆ

ԱՌԱՐԿԱ՝ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ

ԴԱՍԱՐԱՆ՝ 11-ՐԴ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՄՍԱԹԻՎ՝ 03.09.2023

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ՝ Վ. Բրյուսովը և Հայաստանը

ԴԱՍԻ ՏԵՍԱԿԸ՝ ՀԱՂՈՐԴՄԱՆ

ՆՊԱՏԱԿԸ՝

- Ծանոթացնել աշակերտներին Բրյուսովի Հայաստանին նվիրված ստեղծագործություններին
- Արժևորել նրա դերը հայ գրականության մեջ
- Կարողանալ ներկայացնել Բյուսովի դերը :

ՄԵԹՈԴՆԵՐԸ՝ զրույց, դասախոսություն, բանաստեղծությունների վերլուծություն,

Սահիկաշարի դիտում, հարցաթերթիկ:

ՎԵՐՁՆԱՐԴՅՈՒՆՔ՝

Աշակերտները նախապատրաստված են ինքնուրույն ներկայացնել բանաստեղծի դերը հայ գրականության մեջ:

Դասն իրականացվում է ԽԻԿ համակարգով:

ԸՆԹԱՑՔԸ՝

ԽԹԱՆՄԱՆ ՓՈՒԼ

Խթանման փուլ

Խթանման փուլում ուսուցիչը զրույցի և հարցման միջոցով պարզում է, թե սովորողներն ի՞նչ գիտեն թեմայի վերաբերյալ, արդյոք նրանք հայ հրականությունից յուրացրել են ինչ-որ տեղեկություն թեմայի վերաբերյալ: Պարզում ենք, որ

սովորողները Վահան Տերյանի կյանքը և ստեղծագործական ուղին ուսումնասիրելիս յուրացրել են նաև Բրյուսովի ծավալած գործունեությունը Տերյանի հոդվածների կազզման, բանաստեղծությունների թարգմանության հարցում:




Իմաստի ընկալման փուլ

Այս փուլն իրականացնում ենք ինտերակտիվ եղանակով: Էլեկտրոնային գրատախտակին ներկայացնում ենք սահիկաշարը և կարդում դասախոսություն, որը սովորողները գրի են առնում:

Անպայմանորեն նշում ենք Բրյուսովի մասին հատկանշական խոսքերը: 1915 թվականին նա մի կարևոր հետք է թողել հայ գրականության էջերում . դա «Հայաստանի պոեզիա» ժողովածուի խմբագրությունն է , մի շարք տերյանական բանաստեղծությունների թարգմանությունները, հատկանշական է նաև այն, որ Բլոկին գրած նամակում նա նաև կատարել է թարգմանություններ Քուչակից, Իսահակյանից: Այս ամենի մասին է ներկայացնում ուսուցիչը : Բրյուսովի կարևոր նպատակներից է եղել բացել ռուս ընթերցողի առաջ Հայաստանի բանաստեղծական աշխարհը և դա նրա մոտ ստացվել է: Սա մեր արժեհամակարգի ձևավորման առանցքն է: Իմաստի ընկալման փուլում ուսուցիչն ընթերցում է Բրյուսովի կողմից թարգմանված մի շարք բանաստեղծական գոհարներ:

Կշռադատման փուլ

Սովորողները ներկայացնում են ձևավորված կարծիքը. ուսուցիչը տրամադրում է հարցաթերթիկ՝ պարզելու համար արդյոք նա հասա՞վ իր առջև դրված նպատակին՝ այն է ՝ ինչպիսի՞ արժեհամակարգ ձևավորեց այս դասի ընթացքում:

Հանձնարարվում է տնային աշխատանքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Որպեսզի ուսուցիչը կարողանա սովորողների մեջ արժեքային համակարգ ձևավորել՝ նա ինքը պետք է լինի այդ արժեհամակարգի կրողը:

2. Որպեսզի ուսուցիչը կարողանա սովորողների մեջ ձևավորել արժեքային համակարգ՝ նա պետք է ունենա բազմակողմանի զարգացվածություն, պետք է տիրապետի իր մասնագիտության յուրաքանչյուր տարրին, պետք է լինի բարեկիրթ , մի քիչ էլ դերասան, պետք է նյութը ճիշտ մեթոդներով մատուցելու կարողություն ունենա, պետք է հստակ իմանա , թե որն է իր նպատակը և ինչ վերջնարդյունք պետք է ունենա իր աշխատանքը:

3. Կրթական գործունեության մեջ ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների մեթոդների և տեխնիկայի օգտագործումը դրական մոտիվացիա է ստեղծում երեխաների համար, նպաստում է հիմնական մտավոր գործողությունների, հաղորդակցական իրավասության,ստեղծագործական ակտիվ անհատականության զարգացմանը և ձևավորում է անհրաժեշտ արժեհամակարգ:

4. Միջարակայական կապերը լայնորեն նպաստում են արժեհամակարգի ձևավորմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ՝ ժողովրդավարական մշակույթի համար (Բնօրինակի անվանումը՝ Reference Framework of Competences for Democratic Culture – Volume 3 (ISBN 978–92–871–8575–4) (Եռահատոր շարք)՝ Եվրոպայի խորհրդի հրատարակչություն,

2. Հանրակրթության պետական չափորոշիչ–Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ https://www.arlis.am/images/ARLIS/

3. Հովակիմյան Գ. Պ., Ժառանգորդումը մշակույթում, «Մանկավարժական միտք» N 1–2, «Զանգակ» հրատ., Եր., 2012, էջ 40–49:

4. Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Կրթության ազգային ինստիտուտ, Լոռու մասնաճյուղ, ք. Վանաձոր, 2008,

5. Вентцель К. Н., Среда как фактор нравственного воспитания, М., 1984.

6. Ковалев С. В., Подготовка старшеклассников к семейной жизни, М., «Просвещение», 1991.

7. Кон И., Социализация детей в изменяющемся мире, М., 1990.

8. Семенов В. Д., Взаимоотношение школы и социальной среды, М., «Педагогика», 1986.

9. Франкл В., Человек в поисках смысла, М., 1990.